Ներդրումային ծրագիր-առաջարկ

Մառանային գինու արտադրություն

_____
(Ներդրումային ծրագրի անվանումը)

Ամփոփ նկարագիր

Ամփոփ նկարագրել ներդրումային ծրագիր-առաջարկը, մասնավորապես՝ ներդրման ոլորտը, արտադրվող ապրանքը կամ տրամադրվող ծառայությունը, հիմնական սպառման շուկաները, ներդրման տեսակը (նոր ձեռնարկություն, գործող ձեռնարկության ընդլայնում, գործող ձեռնարկության վերապրոֆիլավորում), ներդրման համար նախատեսվող /նախընտրելի/ տարածաշրջանը. մարզը, համայնքը: Ներդրումային ծրագրի ընդհանուր արժեքը, այդ թվում մասնավոր ներդրողի, այլ ներդրողների (եթե կան) ներդրումը և ակնկալվող աջակցությունը:

Ես՝ Արթուր Այվազյանս, նպատակադրվել եմ հիմնել փոքր արտադրական ծավալներով մառանային (փոքրաքանակ) գինու արտադրություն: Արտադրելու եմ կարմիր և սպիտակ անապակ գիններ: Արտադրությունը իրականացվելու է բարձրորակ սարքավորումների և տեխնոլոգիաների կիրառմամբ: Նպատակ է դրված արտադրել գիններ, որոնք կհամապատասխանեն եվրոպական ստանդարտներին և նորմերին: Արտադրանքի որակը ապահովելու համար ունենք լուրջ գիտական հիմքեր և տիրապետում ենք բարձրակարգ տեխնոլոգիաների: Արտադրությունը կազմակերպվելու է Էջմիածին քաղաքում, որտեղ վարձակալելու եմ տարածք: Տարածքը վերանորոգվելու է և հագեցվելու է անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: Բոլոր սարքավորումները գնվելու են Եվրոպայից: Կա նախնական պայմանավորվածություն սարքավորումներ արտադրող ընկերությունների հետ: Արտադրանքը սկզբնական շրջանում իրացվելու է Երևան քաղաքի գինետներում և մասնագիտացված խանութներում: Գինու շուկան դեռ աճում է, ուստի ապահովելով արտադրանքի բարձր որակ կկարողանանք զբաղեցնել մեր խորշը տվյալ ոլորտում, հատկապես հաշվի առնելով, որ շուկայում արտադրանքի մասնակցության մեր բաժնեմասը բավականին փոքր է՝ ≈ 0.87%:

Բիզնեսը կազմակերպելիս հաշվի եմ առել նաև ռիսկերը և դրանք նվազեցնելու կամ շրջանցելու միջոցները:

1. Ներդրման նկարագրություն

1.1. Ներդրման գումարը ***-8 000 000 ՀՀ դրամ***

Պահանջվող ամբողջ գումարը - ***8 000 000 ՀՀ դրամ***

1.2. Նկարագրել ներդրման տեսակը՝

Նոր ձեռնարկություն:

- *Անվանումը՝* ***«Ayvazyan Winery»***
- *Գտնվելու նախատեսված վայրը՝* ***ք.Էջմիածին***
- *Սեփականատեր (սեփականատերեր)՝* ***Արթուր Այվազյան***
- *Կազմակերպա-իրավական տեսակը՝* ***ՍՊԸ***
- *Տեղեկություններ ձեռնարկության տնօրենի վերաբերյալ՝ կոնտակտային տվյալներ՝* ***Արթուր Այվազյան , հեռ. +374 95-05-21-10***
- *Աշխատողների նախատեսվող թվաքանակ՝* ***2-5***
- *Ձեռնարկության նախագծային հզորություն՝* ***3000-5000 շիշ տարեկան***

1.3. Ապրանքի կամ ծառայության նկարագրություն՝ բարձրորակ կարմիր և սպիտակ անապակ գինու արտադրություն (շշալցված):

Մտադրվել ենք հիմնել փոքրածավալ մառանային գինու արտադրություն: Գինեգործությունը իրականացվելու է Էջմիածին քաղաքում գտնվող սեփական տան կիսանկուղային հարկում, որը վերցրել եմ վարձակալության: Տարածքն ունի կոսմետիկ վերանորոգման կարիք և պետք է համալրվի համապատասխան սարքավորումներով և գույքով:

Նախատեսվում է արտադրել կարմիր և սպիտակ անապակ բարձորակ գինիներ, որոնք մրցունակ կլինեն Եվրոպական շուկայում: Շշալցումն ու բրենդավորումը կատարվելու է համապատասխան ֆրանսիական օրինակներին:

2. Շուկայի ուսումնասիրություն

2.1. *Ապրանքի/ծառայության շուկայի նկարագրություն՝* ***ՀՀ, ՌԴ և Եվրամիության մասնագիտացված խանութներ:***

2.2. Հիմնական սպառման շուկաների նկարագրություն՝ ***ՀՀ մասնագիտացված խանութներ:***

Հիմնական մրցակիցների նկարագրություն՝

Քանի որ գինու շուկան շատ մեծ է, իսկ շուկայի ուսումնասիրության համար եղած ժամանակը՝ քիչ, այդ իսկ պատճառով շուկան լիարժեք չի ուսումնասիրվել: Չեն գտնվել արտադրական փոքր ծավալներով և միևնույն ժամանակ բարձրորակ եվրոպական սարքավորումներով և տեխնոլոգիաներով այլ արտադրողներ: Սակայն դիտարկումների արդյունքում բացահայտվել են որոշ մրցակիցների՝ հիմնվելով նրանց արտադրական ծավալների, գնի և ապրանքային տեսքի վրա:

2.3. *Պահանջարկի դինամիկան հիմնական սպառման շուկաներում՝* ***Համաշխարհային և տեղական շուկայում վերջին տարիներին նկատվում է պահանջարկի աճ:***

3. Ձեռնարկության մարքեթինգային քաղաքականությունը

3.1. Գովազդային և առաջմղման քաղաքականություն - ***Մասնակցություն միջազգային մրցույթներին և ցուցահանդեսներին: Նախատեսվում է առաջին տարում գովազդի վրա ծախսել մոտ 550,000 դրամ:***

3.2. Տարածման ուղիները - ***Համտեսների կազմակերպման միջոցով, վաճառք տեղում և մասնագիտացված խանութներում:***

3.3. Գնային քաղաքականություն՝ ***գինը միջին շուկայականից բարձր:***

4. Վաճառքի կանխատեսում

4.1. Վաճառքի ծավալներն արտահայտված ֆիզիկական և դրամական միավորներով, 5 տարվա կտրվածքով:

Նախատեսվում է՝ տարեկան մոտ 3000 - 3300 շիշ: 5 տարվա կտրվածքով նախատեսվում է՝ մոտ 15000 և ավելի շիշ:

5. Ֆինանսական հաշվարկներ

5.1. Ինքնարժեքի հաշվարկ - ***1 շիշը ≈ 1850 դրամ***

5.2. Ակնկալվող շահույթի կամ շրջանառության հաշվարկ 5 տարվա կտրվածքով՝ ***≈32000000 դրամ,***

5.3. Ներդրումների հետգնման ժամկետ՝ ***2 տարի***

Ծրագրի ֆինանսական վերլուծությունը

1.	***Կապիտալի ընդհանուր պահանջ***	***8,000,000 դրամ***
2.	***Կանխիկ դրամի պահանջ***	***8,000,000 դրամ***
3.	***Շահույթ***	***≈ 6,400,000 դրամ***
4.	***Ընդհանուր կապիտալի շահութաբերություն***	***≈ 80%***
5.	***Շահութաբերություն***	***≈ 40%***

6. Ծրագրի սոցիալ-տնտեսական ազդեցությունը

- *Ձեռնարկության կամ ծառայության մատուցման ազդեցությունը մարզի կամ համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակի վրա՝*

Նախատեսվում է բացել 100 նմանատիպ տնային-ընտանեկան գինեգործական արտադրություններ: Խաղողի այգիների տերերը կկարողանան վաճառել ոչ թե հումք՝ խաղող, այլ մթերք՝ առաջնային գինեգործության արտադրանք, որի արժեքը 3-4 անգամ ավելին է:

- *Նոր ստեղծված աշխատատեղերի քանակը՝*

Նախատեսվում է 5 տարում բացել 100 նմանատիպ տնային-ընտանեկան գինեգործական արտադրություններ և ունենալ 200-500 աշխատատեղեր:

7. Պետությունից կամ այլ ներդրողից ակնկալվող օժանդակություն և պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցություն

Այս բաժնում անհրաժեշտ է հստակեցնել ակնկալվող օժանդակության ձևը.

- ***Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցություն***
- ***Հարկային արտոնություններ,***
- ***Դրամաշնորհ,***
- ***Անտոկոս կամ ցածր տոկոսով վարկավորում:***